



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 16 ՄԱՐՏ, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւնն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Սուրբդ սրբոց Երրորդութիւնն, զՄեզ մաքրեալ քեզ բնակութիւնն.

Հարկեա ընդ մանկանցն առագաստի Հանգչիլ ընդ քեզ ի յանկողնի.

Տուր զհայցուած բարեկամին զՓոխ երկոց նկանակին.

Ձի ի սուղնջեան եւ գիշերի Տացուք քեզ փառս անըւելի:

Երեւելի ըյս ստեղծեր, զՏիւ եւ գիշեր բաժանեցեր.

Ծագեա մեզ. Տէր, ի գիշերի զճառագայթս իմանալի.

Տուր յամենայն ժամանակի զՊաշտանող աջքո Հովանի.

Ձի ի սուղնջեան եւ գիշերի Տացուք քեզ փառս անըւելի:

Սիրոյ քո Հուր արկեալքերկիր՝ Բորբոքեցի ի Հոգիս մեր.

զԽորհուրդ սրտից մեր մաքրեցէ՛ զԼոյս գիտութեան քո փայլեցէ.

Իքնոյ մաշու զմեզ զարթուցէ, զՄիտս բոցով քո վառեցէ.

Ձի ի սուղնջեան եւ գիշերի Տացուք քեզ փառս անըւելի:

ԱՊՈԹՔ

Բարեբար Տէր, որ Քու մեծ գթութեամբդ յաւիտեանական հանգիստը պատրաստեցիր առաքինութեամբ վաստակածներուն համար, եւ քաղցր հրաւերով Քեզի կանչեցիր մեղքով ծանրաբեռնուածները: Ծնորհէ, Տէր, որ մեցնէ եւս անխոռով խաղաղութեամբ անցնենք այս գիշեր, եւ մեղքի ծանրութենէն յոգնածներս Քու ողորմութեամբդ հանգստացուր, եւ արժանի ըրէ յաւիտեանական հանգիստին, բոլոր սուրբերուդ հետ միասին: Միշտ փառաւորելով ամենասուրբ Երրորդութիւնդ՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայրնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել գմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեացուր: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւնն, սուր աշխարհիս խաղաղութիւնն:

Եւ Հիւանդաց բժշկութիւնն, ննջեցերոց արքայութիւնն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 102

ՏԱՌԱՊՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ԱՂՕԹՔԸ

Տէր, լսէ իմ աղօթքս, մտիկ ըրէ աղաչանքս:

Երես մի դարձներ ինձմէ, երբոր նեղութեան մէջ եմ.

ականջդ ինձի խոնարհեցուր, երբ Քեզ կանչեմ՝

շուտով պատասխան տուր ինձի:

Որովհետեւ կեանքս ծուխի պէս ցնդեցաւ,

ոսկորներս չոր փայտի պէս այրեցան:

Խոտի պէս կտրուեցայ, եւ ապրելու ցանկութիւնը մէջս մարեցաւ.

նոյնիսկ կերակուր ուտելու ախորժակս կորսնցուցի:

Հառաչելէն մաշեցայ, եւ չոր ոսկոր մնացի:

Կը նմանիմ անապատ ինկած հալուսի մը,

կամ բուի մը՝ որ աւերակներուն մէջ կը նստի:

Անբուն մնացած, կը նմանիմ տանիքին վրայ մինակ նստած
ննդուկին:

Թշնամիներս կը նախատեն զիս օրն ի բուն,

անոնք որ երէկ զիս կը գովէին՝

այսօր անունս կը գործածեն անէծքի տեղ:

Հացի փոխարէն՝ մոխիրն է հիմա իմ կերակուրս,

արցունքով խառն է իմած ջուրս.

որովհետեւ՝ սրտմտութեանդ ու զայրոյթիդ

պատճառով զիս բռնեցիր նետեցիր:

Կեանքս արդէն անցեր է, իրիկնային ստուերի պէս,

եւ ես ցամքեր եմ, խոտի պէս:

Բայց դուն, ով Տէր, յաւիտեան կը գահակալես,

գալիք բոլոր սերունդները պիտի խօսին Քու մասին:

Եւ, ատենն է որ գթաս Սիոնին, հասած է ժամանակը,

որ գթութիւնդ ցոյց տաս:

Մենք՝ ծառաներդ սրտովին կապուած ենք անոր ամէն մէկ ֆարին,

եւ կը գուրգուրանք նոյնիսկ անոր փոշիին:

Բոլոր ազգերը պիտի վախնան անունէդ, Տէր,

երկրի բոլոր թագաւորները պիտի վախնան Քու փառքէդ:

Որովհետեւ Տէրը պիտի վերաշինէ Սիոնը, եւ իր փառքով յայտնուի,

պիտի լսէ անօգնական մարդոց աղօթքը,

պիտի չանտեսէ անոնց խնդրանքները:



ՏԱՌԱՂՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ԱՂՕԹԸԸ

Որքան պաշտամունքային, արարողական բնոյթ ունին Սաղմոսները, բայց մէկ բան որոշ է, ու պէտք չէ մոռնալ, նոյնքան ալ մարգարեական, ու մանաւանդ՝ Յիսուս Քրիստոսի կեանքին ու առաքելութեան հետ կապուած պատգամներ են, որոնց ակնարկութիւն պիտի ընէր Քրիստոս Իր աշակերտներուն, Ղուկաս 24:44: Ահա այդ ակնոցով նաեւ կարդալու եւ ըստ այնմ սերտելու նաեւ մեր այսօրուան 102-րդ Սաղմոսը: Վերնագիրը փառապող երիտա-սարդի մը աղօթքն է: Առաջին իսկ ակնարկով կրնանք կարդալ այնպէս մը, որ կը ներկայացնէ ռեւէ երիտասարդի մը վիճակը, որ կ'անցնի նեղութեան ու փառապանքի միջով: Երբ, սակայն, մարգարեական ակնոցով, ապա աւելի յստակ բաներ կը սկսինք տեսնելու անոր մէջ, որ խօսքը միայն երիտասարդի մը մասին չէ, այլ՝ Յիսուս Քրիստոսի եւ Յիսուս Քրիստոսի մարմնին, որուն գլուխն է Ինք: Հետաքրքրականօրէն, փակաւին, մարմնին կրած նեղութիւնն ու փառապանքը, գլուխն է, որ կ'արտայայտէ: Յիսուս Քրիստոս մէջ խորացուած Փեսան ու Հարսը. Եսայի 61:10: Այսինքն՝ Քրիստոսի աղօթքը, նաեւ մեր աղօթքը: Կը սկսի խնդրանքով մը, “Տէր, լսէ աղօթքս եւ մտիկ ըրէ աղաչանքս: Երես մի դարձներ”: Ի՞նչ բանի համար երես դարձնէ: Մարդու մեղքի պատճառով, չըլլայ Աստուած երես դարձնէ: Եւ ահա կը սկսի մէկ առ մէկ թուելու թէ ինչ պատահեցաւ. “կեանքս ծուխի պէս ցնդեցաւ, ոսկորները չոր փայտի պէս այրեցան: Խոտի պէս կտրուեցայ, եւ ուրելու ախորժակը կորսնցուց”: Կեանքի ծուխի պէս ցնդիլը, հպարտութեան նշան, ինչպէս ծուխի կը բարձրանայ, այնպէս ալ հպարտութիւնը մեզ կը բարձրացնէ, սակայն՝ խափուսիկ, որովհետեւ յետոյ պիտի յօդս ցնդի: Իսկ ոսկորները չոր փայտի պէս այրեցան, փրձութիւններն ու նեղութիւններն են: Կը պարկերացնէ թէ մարդու կեանքը նման է խոտի, եւ հասած է այնպիսի վիճակի, որ ապրելու ցանկութիւն չունի ալ: Իսկ կերակուր ուրելու ախորժակն ալ կորսնցուց: Ինչպի՞սի ուրելիքի մասին է խօսքը: Աստուած դրախտի պարտեզին մէջ ուրելիք փուռ մարդուն, որպէսզի ուրէ, սովորական, նիւթական ուրելիքի կողքին, Աստուծոյ իսկ խօսքը, պարտիւրանը ուրելիք էր, այնպէս ինչպէս Պիտի ըսէ Յիսուս Քրիստոս իր փորձութեան ժամանակ, “Մարդը միայն հացով կ'ապրիր, այլ նաեւ՝ Աստուծոյ խօսքով”, սակայն մարդը ընտրեց չարին հրամցուցած թոյնը: Տակաւին, աւելի հետաքրքրական պարկերացում 6 եւ 7 համարները: Երեք փարբեր տեսակի թռչուններ փար-բեր տեղերու մէջ. հաւալուս՝ անապար իյնկած, բու՝ աւերակներու մէջ նստած, եւ ճնճղուկ փանիքի վրայ մինակ: Երեք թռչուններու պարագային Քրիստոսի անձը ներկայացնող, Անոր ծնունդէն մինչեւ համբարձումը: 8-րդ համարը, թշնամիները, երէկ կը գովէին կեղծաւորութեամբ, իսկ այսօր անունը կը գործածեն անէծքի տեղ: Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչ-ները: Նեղութեան եւ փառապանքի աւարտին կայ նաեւ յոյսի եւ յարութեան բաժինը: Տէրը պիտի վերաշինք Սիոնը, եւ Իր փառքով յայտնուի, եւ Ան պիտի լսէ անօգնական մարդոց աղօթքը եւ պիտի ջանտեսէ անոնց խնդրանքը: Եւ ինչ է այդ խնդրանքը՝ մեղքերու քաւութիւն եւ թողութիւնը Քրիստոսի փրկարար արեամբ:

Պահապան ամենայնի Քրիստոս,
*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի քուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ք քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*